«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 23-ի N 1244-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«_____» _____-ի 2020 թվականի N_____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 1244-Ն **ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ** ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ **ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության2020 թվականի հուլիսի 23-ի «Փ**ոքարար ծառայության պաշտոն զբաղեցնելու մրցույթի կարգը սահմանելու մասին»** N 1244-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) լրացնել 15.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«15.1. Սույն կարգի 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված ընդհանուր կանոններից բացառություն են կազմում փրկարարական ծառայության կրտսեր խմբի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստավորման (թեստային առաջադրանքներում ընդգրկվող) և հարցազրույցի փուլերի անցկացման համար համակարգչային ծրագրեր մուտքագրվող հարցերը, որոնք բխում են միայն փրկարարական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված մասնագիտական գիտելիքների տիրապետմանը ներկայացվող պահանջներից՝ սույն կարգով սահմանված չափաբաժիններով։».

2) 19-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«19. Հայտարարության հետ հրապարակվում են նաև՝

1) այն բնագավառները, որոնցից կազմված են լինելու փրկարարական ծառայության միջին և բարձր խմբերի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստերը.

2) այն իրավական ակտերի ցանկը, որոնցից բխում են սույն կարգի 93-րդ կետով նախատեսված՝ փրկարարական ծառայության միջին և բարձր խմբերի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցի փուլի անցկացման հարցերը.

3) սույն կարգի 15.1-ին կետով նախատեսված փրկարարական ծառայության կրտսեր խմբի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստավորման և հարցազրույցի փուլերի անցկացման հարցաշարերը:».

3) լրացնել 42.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«42.1. Սույն կարգի 42-րդ կետով նախատեսված ուղեգիրը ծառայության բժշկական ապահովման վարչություն ներկայացնելուց հետո քաղաքացին հնգօրյա ժամկետում լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ձևավորված բժշկական հանձնաժողով է ներկայացնում արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատությունների կողմից տրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 98-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) N 2 հավելվածով սահմանված փրկարարական ծառայության ծառայողների լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկին համապատասխան բժշկական հետազոտությունների արդյունքները մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտից քաղվածքի ձևով՝ լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ձևավորված բժշկական հանձնաժողովի կողմից Որոշման N 2 հավելվածով սահմանված փրկարարական ծառայության ծառայողների լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկին համապատասխան ռազմաբժշկական փորձաքննություն անցկացնելու և փրկարարական ծառայության համար քաղաքացու պիտանիության մասին որոշում ներկայացնելու նպատակով:».

4) 43-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«43. Սույն կարգի 42.1-ին կետով նախատեսված քաղվածքը լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ձևավորված բժշկական հանձնաժողով ներկայացնելուց հետո հնգօրյա ժամկետում բժշկական հանձնաժողովը պատասխանատու ստորաբաժանում է ներկայացնում փրկարարական ծառայության համար քաղաքացու պիտանիության մասին բժշկական հանձնաժողովի որոշումը (նոր ընդունվողի հետազոտության և ռազմաբժշկական փորձաքննության քարտ), որը կցվում նյութերին: Բժշկական հանձնաժողովի կողմից տրվող քարտի ձևը հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը:».

5) լրացնել 43.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«43.1. «Ոչ պիտանի է փրկարար ծառայության համար» բժշկական հանձնաժողովի որոշման դեպքում քաղաքացին զրկվում է մրցույթին

մասնակցելու իրավունքից:».

6) 45-րդ կետում «զինված ուժերի» բառերից առաջ լրացնել «փրկարար ծառայության,» բառերը.

7) 88-րդ կետում «գնահատումն է» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ փրկարարական ծառայության կրտսեր խմբի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցի, որի նպատակն է մրցույթի մասնակցի՝ տվյալ թափուր պաշտոնի անձնագրով սահմանված մասնագիտական գիտելիքների ստուգումն ու գնահատումը».

8) 93-րդ կետում «իրավական ակտերից» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն կարգի 15.1-ին կետով սահմանված դեպքերում» բառերը.

9) 99-րդ կետում «2» թիվը փոխարինել «5» թվով, «1» թիվը փոխարինել «1-4» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

Վարչապետ Նիկոլ Փաշինյան

2020 թվական _____ ___

ք. Երևան